

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«_1_»_նոյեմբերի_ 2019_թ. թիվ_ 139_ նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԾՐԱԳԻՐ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ

ԵՐԵՎԱՆ

2019

**ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ**

ՆԱԽԱԲԱՆ

Գիտամանկավարժական պրակտիկան դասավանդողի մասնագիտական պատրաստության, հետազայում նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնական աշխատանքները հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ անհատական ստեղծագործական և հետազոտական աշխատանքի ձևավորման կարևորագույն բաղադրիչ է: Այն հանդիսանում է ուսանողների տեսական և պրակտիկ պատրաստության կապող օղակը, ուսուցման որակի բարձրացման կարևոր պայմանը, պրոֆեսիոնալ մանկավարժական կոմպետենցիաների ձևավորման նախապայմանը:

Այն նախատեսում է ուսումնական նյութերի որոնում, համակարգում, մշակում և պարապմունքների նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ըստ ներդրված առարկայական ուսումնական պլանների և առարկայական ծրագրերին:

1. ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամանկավարժական պրակտիկայի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցման գործընթացի նախագծման, պլանավորման, իրականացման, արժևորման և գիտամեթոդական հետազոտություններ իրականացնելու կոմպետենցիաներ:

Գիտամանկավարժական պրակտիկայի հիմնական խնդիրներ են.

- մագիստրոսական ծրագրերի առարկաների ուսուցման ընթացքում ուսանողների մոտ ձևավորել ուսումնական պարապմունքներ

- նախապատրաստելու, կազմակերպելու, իրականացնելու և անցկացնելու ձևերի, մեթոդիկաների և տեխնոլոգիաների կիրառման կարողություններ,
- ուսանողների ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների հիման վրա ձևավորել աշխատանքային կոմպետենցիաներ,
 - մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդողի աշխատանքի տեսական, պրակտիկ և անձնային-դրդապատճառային պատրաստությունը,
 - ուսանողների կողմից դասալսման և ուսումնական պարապմունքների վերլուծության մեթոդիկայի յուրացումը,
 - մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնական և դաստիարակչական գործընթացների դիագնոստիկայի և մշտադիտարկման իրականացման, ուսումնական արդյունքների կանխատեսման կարողությունների մշակումը,
 - ուսանողների մոտ ձևավորել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, տեղեկատվական, հաղորդակցական միջոցները ուսուցման գործընթացում կիրառելու հմտություններ,
 - ուսանողների մոտ ձևավորել ինքնակրթության և ինքնակատարելագործման կարողություններ, նպաստել նրանց գիտամանկավարժական գործունեության ակտիվացմանը և նրանց մոտ անձային և մասնագիտական որակների զարգացմանը,
 - աջակցել ուսանողների ինքնակրթության և ինքնակատարելագործման ունակությունների ձևավորմանը, նրանց գիտամանկավարժական գործունեության ակտիվացմանը,
 - աջակցել մասնագիտական կրթության և դաստիարակության նպատակներին համահունչ ուսանողների անձնային որակների ձևավորմանը և զարգացմանը:

2. ՊՐԱԿՏԻԿԱՆՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պրակտիկայի բովանդակությունը պետք է ապահովի գիտամանկավարժական գործունեության հետ կապված տեխնոլոգիական կարողությունների,

քննադատական մտածողության ձևավորում և զարգացում, իրադրության բազմակողմանի ընկալում և գնահատում, մարդկային խմբերում աշխատելու, այդ խմբերը ղեկավարելու հմտություն, ինչպես նաև՝ հաղորդակցական հմտությունների ձևավորում:

Պրակտիկական պետք է աջակցի ուսանողի մասնագիտական կայացմանը, անձի սոցիալացմանը, որակապես այլ տեսակի գործունեության՝ գիտամանկավարժական գործունեության իրականացմանը, մասնագիտության, հասարակական նորմերի և արժեքների յուրացմանը, ինչպես նաև ապագա ուսանողների գործարարական մշակույթի ձևավորմանը:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները մասնակցում են պրակտրկայի բազայի կամ համապատասխան ամբիոնի գիտամանկավարժական և կազմակերպչական աշխատանքներին:

Ուսանողները պրակտիկայի ընթացքում ուսումնասիրում են.

- տվյալ ուսումնական հաստատության, դրան համապատասխան ամբիոնների գործունեության ուղղվածությունը (բովանդակությանը, ձևերին),
 - դասավանդողի ուսումնական բեռնվածության պլանավորման, իրականացված աշխատանքների հաշվառման փաստաթղթերը,
 - դասախոսների պլաններն ու հաշվետվությունները,
 - կենտրոնի, համապատասխան ամբիոնների նոմատիվ և ընթացակարգային ղեկավարման փաստաթղթերը,
 - կենտրոնի կառավարման համակարգը, ամբիոնների նիստերի արձանագրությունները,
 - ուսումնական մոդուլների, առարկաների ծրագրերը, դասախոսությունների տեքստերը, լաբորատոր և գործնական պարապմունքների ծրագրային բովանդակությունը, լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ցուցումները,
 - գիտամեթոդական նյութերը և մշակումները, ամբիոնների գիտական ուղղվածությունը, գիտամեթոդական գրականությունը,
- բ) իրականացվում են հետևյալ գիտամանկավարժական աշխատանքները.

- գիտամանկավարժական պրակտիկայի հանձնարարությունների անհատական օրացուցային պլանի կազմում,
- ծանոթություն նախնական, միջին, բարձրագույն մասնագիտական հաստատության մանկավարժական կոլեկտիվի և պրոֆեսորադասախոսական կազմի (մասնագիտական ամբիոնի), առարկայական կաբինետի, լաբորատորիայի, արհեստանոցի և խմբի ուսանողների հետ, և ուսանողների հետ շփման ոճերի ընտրություն,
- ծանոթություն հաստատության փաստաթղթերի բովանդակության և դրանց կառուցվածքի հետ,
- ուսուցման գործընթացի պլանավորում, ուսումնական պլանի, առարկայական ծրագրի և դասագրքի վերլուծություն,
- հաճախում են մասնագիտական առարկայի դասերի (նախնական, միջին, բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում), դասալսումներ, դասալսումների օրագրի վարում, պարապմունքների վերլուծություն, դասախոսի հետ նախապատրաստելուց հետո ուսումնարաններում, քոլեջներում դասերի կամ բակալավրի կրթական ծրագրում ուսումնական պարապմունքների ինքնուրույն անցկացում (առնվազն 3 փորձնական և ստուգարքային դասերի կամ ուսումնական պարապմունք՝ մասնագիտական հաստատություններում) մշակում դասախոսությունների կոնսպեկտներ (առնվազն մեկ առարկայից), անցկացում,
- ձևավորում են տվյալ առարկայի դասավանդման մեթոդական փաթեթ, որը ներառում է.
 1. տվյալ առարկայի դասախոսությունները՝ օգտագործած գրականության ցանկով,
 2. հատուկ թեստեր,
 3. տվյալ առարկային վերաբերվող վերջին շրջանի տպագիր նյութեր (գրքեր, ամսագրեր, հոդվածներ և այլն),
- մասնակցում են ուսումնական հաստատության ամբիոնի աշխատանքներին.

1. ակտիվորեն մասնակցում են սեմինարներին, մեթոդավարումների աշխատանքներին, գիտական կոնֆերանսներին և այլն,
2. մասնակցում են ուսումնական հաստատության ամբիոնի բոլոր միջոցառումների կապված ուսումնական, մեթոդական և դիդակտիկ նյութերի, գիտամեթոդական համալիրների և նյութերի ստեղծման հետ,
3. պրակտիկայի ծրագրի շրջանակներում կատարում են առանձին հանձնարարություններ:

3. ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱԲՅՈՒՆՔՆԵՐ

Պրակտիկայի ավարտին ուսանողները.

կիմանան.

- Գիտաանկավարժական հետազոտությունների, աշակերտի և ուսանողի անձի ուսումնասիրման մեթոդները,
- մասնագիտական ուսումնական հաստատության փաստաթղթերի բովանդակությունը և կառուցվածքը,
- ուսուցման մեթոդների և հնարների կիրառման պայմանները և ձևերը,
- առարկայի ուսումնական ծրագրի բովանդակությունը,
- ուսումնական պարապմունքների տիպերը, կառուցվածքը, առանձնահատկությունները,
- դասերի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան,
- դասախոսի ուսումնական աշխատանքի պլանավորման սկզբունքները,
- աշակերտական և ուսանողական կոլեկտիվների զարգացման մակարդակները և դրանց ձևավորման ուղղությամբ ուսուցչի և դասախոսի գործունեությունը,
- ուսանողների հետ շփման ոճերը,

կտիրապետեն.

- սեփական գիտամանկավարժական գործունեություն պլանավորելու, վերլուծելու,
- դասախոսի ուսումնական գործունեությունը դիտելու և վերլուծելու,

- ուսումնական պարապմունքի ընթացքը արձանագրելու, դրանք՝ ըստ առանձին բաղադրամասերի վերլուծելու,
- ուսումնական աշխատանքի կազմակերպման մեթոդների, միջոցների և ձևերի կիրառման,
- ուսանողների ուսումնագործունեությունը, վարքը դիտելու, ուսանողների հետ ստեղծագործական աշխատանքների կազմակերպման և անցկացման,
- դասի նպատակների և խնդիրների որոշման, պլան կոնսպեկտներ և տեխնոլոգիական հերթագայության քարտեր կազմելու, դասեր անցկացնելու,
- մեթոդական և գիտամեթոդական ուսումնասիրություններ իրականացնելու, սեփական գիտամանկավարժական գործունեությունը վերլուծելու, արժևորելու և գնահատելու հմտություններին:

կկարողանան.

- մշտապես շփվել ուսանողների հետ և հետևել նրանց գործունեությանը, նրանց շփումներին, իրականացնել դիագնոստիկ և մոնիթորինգային աշխատանքներ,
- ծանոթանալ դպրոցի և մասնագիտական ուսումնական հաստատության ուսումնական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման համակարգին, հարմարվել ուսումնական հաստատության աշխատանքային ռեժիմին,
- վերլուծել ուսումնական պլանը, առարկայական ծրագիրը, դասագիրքը,
- ուսումնադաստիարակչական գործընթացի դիագնոստիկայի և մոնիտորինգի իրականացման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները կանխատեսելու մեթոդներին, եղանակներին:
- կատարել դասալսումներ, կազմակերպել դրանց քննարկումներ,
- ինքնուրույն պլանավորել, նախագծել, նախապատրաստել, կազմակերպել, անցկացնել դասեր, արտադասարանական պարապմունքներ, դաստիարակչական միջոցառումներ, արժևորել և գնահատել դրված նպատակները իրականացրած լինելու մակարդակը,

- աշխատել համագործակցելով կոլեգաների հետ,
- իրականացնել ուսումնական գործընթացի դիագնոստիկա և մոնիտորինգ, կանխատեսել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները:

4. ՈՒՍԱՆՈՂ -ՊՐԱԿՏԻԿԱՆՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գիտաանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է ուսումնասիրի.

ա) նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝

- կրթական ծրագրերի պետական չափորոշիչները,
- ուսումնական հաստատության կառավարման հիմունքները, ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկողության ընթացակարգերը և փաստաթղթերը,
- համապատասխան առարկաների առարկայական ծրագրերի կառուցվածքը, բովանդակությունը,
- առարկաների ուսուցման օրացույցային-թեմատիկ պլանները,
- պարապմունքների անցկացման պլանների և կոնսպեկտների նախագծման գործընթացները,
- ուսումնական պարապմունքների անցկացման բոլոր ձևերը,
- առարկաների դասավանդման մեթոդիկաները և ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները,
- ուսուցման գործընթացի արժևորման և գնահատման գործընթացները,
- ուսումնադաստիարակչական գործունեության ժամանակակից ուղղություններն ու մեթոդիկաները,
- ուսումնադաստիարակչական աշխատանքների և միջոցառումների կիսամյակային կամ տարեկան պլանները,

բ) բարձրագույն ուսումնական հաստատություններում՝

- համապատասխան կրթական ծրագրի պետական ընդհանուր կրթական և մասնագիտության չափորոշիչը աշխատանքային ուսումնական պլանը,

- տվյալ մոդուլի կամ առարկայի բովանդակությունը, օգտագործվող ուսումնական ուսումնամեթոդական գրականությունը, առարկայի դասավանդման օրացույցային թեմատիկ պլանը,
- առարկայական ուսումնական պլանով նախատեսված լաբորատոր աշխատանքների անցկացման համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումները և մեթոդական ցուցումները,
- տվյալ առարկայի դասավանդման համար կիրառվող ուսումնական պարապմունքների բոլոր ձևերը,
- պարապմունքների նպատակների և թեմաների համապատասխան հիմնական և լրացուցիչ գրականության ընտրության ու վերլուծության մեթոդները,
- բարձրագույն կրթության համակարգում կրթական և գիտական գործունեության կազմակերպման անհրաժեշտ պայմանների կրթական գործունեության պահանջները և հիմնական ձևերը:

Գիտամանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է իրականացնի.

- ժամանակակից գիտամեթոդական մակարդակով ուսումնական նյութի բովանդակության մշակում,
- օրացույցի թեմատիկ պլանի կազմում, ուսումնական պարապմունքների պլանների և կոնսպեկտների ինքնուրույն նախապատրաստում,
- ուսուցման և դաստիարակչական գործընթացների (ուսումնական և արտալսարանական պարապմունքների՝ դասախոսություններ, գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանքներ, դաստիարակչական միջոցառման) կազմակերպում և իրականացում, ուսումնադաստիարակչական ինքնուրույն գործունեություն,
- ուսումնական և դաստիարակչական աշխատանքների արժևորում և գնահատում,

- ուսումնադաստիարակչական գործընթացի դիագնոստիկայի և մոնիտորինգի, իրականացում, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքների կանխատեսում,
- բակալավրի կրթական ծրագրի գործնական և լաբորատոր աշխատանքների անցկացում՝ դասախոսի ղեկավարությամբ,
- փորձնական դասախոսությունների անցկացում՝ դասախոսի ղեկավարությամբ,
- մագիստրոսական թեզի թեմայի պատրաստում,
- անցկացված պարապմունքների գիտամեթոդական վերլուծություն:

**5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ԵՆ՝**

- պրակտիկայի ղեկավարի, մեթոդիստի և դասավանդողի՝ մասնակցությունը, միջամտությունը պրակտիկանտի մասնագիտական գործունեությանը,
- պրակտիկանտի մասնագիտական գործունեության կազմակերպման ինքնուրույնության ձևավորվածությունը, ակտիվության աստիճանը,
- պրակտիկանտի՝ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, մանկավարժական փորձի ձեռքբերման, այդ փորձի ուսումնասիրության և վերլուծության կարողությունների ձևավորվածության աստիճանը,
- երեխաների նկատմամբ սիրո և հետաքրքրությունների, գիտամանկավարժական գործունեության գնահատման կարողության ձևավորվածության աստիճանը,
- հոգեբանամանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը,
- դիտողականության, նպատակասլացության, աշխատասիրության հատկանիշների առկայությունը,
- կազմակերպչական և հաղորդակցական ընդունակությունների, պահանջկոտության, կայունության, հավասարակշռության, զսպվածության, ինքնագնահատման ունակության ձևավորվածության մակարդակները,

- վերջնական և միջանկյալ արդյունքների կանխատեսման հիման վրա մասնագիտական-մանկավարժական գործունեության նպատակների և խնդիրների նախագծման կարողությունների ձևավորվածությունը,
- դասի և արտադասարանային միջոցառումների ինքնուրույն պլանավորման, նախագծման, նախապատրաստման, իրականացման հմտությունների ձևավորվածության մակարդակը,
- ուսուցման մեթոդների ու եղանակների, հնարների, զննական նյութերի, սովորողների գործունեության ձևերի (անհատական, խմբային, կոլեկտիվ) ինքնուրույն ընտրություն կատարելու և կիրառելու հմտությունների ձևավորվածության մակարդակը,
- ուսումնադաստիարակչական գործընթացի դիագնոստիկա և մոնիտորինգ իրականացնելու, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները կանխատեսելու կարողությունների առկայությունը,
- գործընկերների ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքների գնահատման, սեփական գործունեության ինքնագնահատման, սխալների և բացթողումների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ցուցաբերման կարողությունների առկայությունը:

6. ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պրակտիկան անցկացվում է նախնական, միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Մանկավարժական պրակտիկային վերաբերվող ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը ուսանողներին ներկայացվում է ընդհանուր նախապատրաստված կազմակերպչական կոնֆերանսում:

Մանկավարժական պրակտիկայի ղեկավարությունն իրականացնում է.

- ա) բուհի կրթական ծրագրի որևէ մասնագիտությունում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներից ընտրված մասնագետը (եթե պրակտիկան անցկացվում է նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում),

բ) մագիստրանտի գիտական ղեկավարը, եթե պրակտիկան անցկացվում է բուհում (կամ համապատասխան ամբիոնում):

Պրակտիկայի անցկացման առաջին շաբաթվա ընթացքում ուսանողը պրակտիկայի ղեկավարների հետ կազմում է պրակտիկայի իր անհատական պլանը:

Պրակտիկայի անհատական պլանում ընդգրկվում է պրակտիկանտի աշխատանքը՝ երկու հիմնական ուղղություններով՝

- գիտամանկավարժական գործունեություն,
- աշխատանք համապատասխան մասնագիտական ամբիոնում:

Նախնական, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պրակտիկայի անցկացման համար նշանակված պրակտիկայի ղեկավարը համապատասխան ուսումնական հաստատության ղեկավարության, տնօրենի, տվյալ առարկան դասավանդող դասախոսի, ուսուցչի, դասվարի հետ քննարկում և որոշում են պրակտիկայի բովանդակությունը, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, նոր մեթոդիկաների կիրառման, թեստավորման, գիտական նախագծերի պլանավորման, անցկացման հնարավորությունները: Կազմվում է ուսանողի աշխատանքային պլան՝ ընդգրկելով նաև դասալսումները և դասերի ինքնուրույն անցկացման ժամանակացույցը: Համապատասխան մասնագիտական ամբիոնում պրակտիկայի անցկացման նպատակով ուսանողը իր գիտական ղեկավարի հետ ընտրում է ուսումնական առարկա՝ ինքնուրույն նախագծելու, նախապատրաստելու, անցկացնելու, ինչպես նաև պարապմունքների վերլուծություն կատարելու, ուսումնառության արդյունքները արժևորելու, գնահատելու համար:

Ուսանողների պրակտիկայի աշխատանքային ժամանակացույցը կազմվում է՝ ըստ տվյալ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի հետ համաձայնեցված դասացուցակի:

7. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պրակտիկայի բովանդակությունը պետք է ապահովի գիտամանկավարժական գործունեության հետ կապված տեխնոլոգիական կարողությունների, քննադատական մտածողության ձևավորում և զարգացում, իրադրության բազմակողմանի ընկալում և գնահատում, մարդկային խմբերում աշխատելու, այդ խմբերը ղեկավարելու հմտություն, ինչպես նաև հաղորդակցական հմտությունների ձևավորում:

Պրակտիկական պետք է աջակցի ուսանողի մասնագիտական կայացմանը, անձի սոցիալացմանը, որակապես այլ տեսակի՝ գիտամանկավարժական գործունեության իրականացմանը, մասնագիտության, հասարակական նորմերի և արժեքների յուրացմանը, ինչպես նաև ապագա ուսանողների գործարարական մշակույթի ձևավորմանը:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները մասնակցում են պրակտիկայի բազայի կամ համապատասխան ամբիոնի գիտամանկավարժական և կազմակերպական աշխատանքներին:

Ուսանողները պրակտիկայի ընթացքում ուսումնասիրում են.

- տվյալ ուսումնական հաստատության, դրան համապատասխան ամբիոնների գործունեության ուղղվածությունը (բովանդակությունը, ձևերը),
- դասավանդողի ուսումնական բեռնվածության պլանավորման, իրականացված աշխատանքների հաշվառման փաստաթղթերը,
- դասախոսների պլաններն ու հաշվետվությունները,
- ուսումնական հաստատությունների, համապատասխան ամբիոնների նումատիվ և ընթացակարգային ղեկավարման փաստաթղթերը,
- ուսումնական հաստատությունների կառավարման համակարգը, ամբիոնների նիստերի արձանագրությունները,
- ուսումնական մոդուլների, առարկաների ծրագրերը, դասախոսությունների տեքստերը, լաբորատոր և գործնական պարապմունքների ծրագրային բովանդակությունը, լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ցուցումները,

- գիտամեթոդական նյութերը և մշակումները, ամբիոնների գիտական ուղղվածությունը, գիտամեթոդական գրականությունը, իրականացվում են գիտամանկավարժական հետևյալ աշխատանքները.
- գիտամանկավարժական պրակտիկայի հանձնարարությունների անհատական օրացուցային պլանի կազմում,
- ծանոթություն նախնական, միջին, բարձրագույն մասնագիտական հաստատության մանկավարժական կոլեկտիվի և պրոֆեսորադասախոսական կազմի (մասնագիտական ամբիոնի), առարկայական կաբինետի, լաբորատորիայի, արհեստանոցի և դասարանի աշակերտների և խմբի ուսանողների հետ, աշակերտների և ուսանողների հետ շփման ոճերի ընտրություն,
- ծանոթություն հաստատության փաստաթղթերի բովանդակությանը և դրանց կառուցվածքին,
- ուսուցման գործընթացի պլանավորում, ուսումնական պլանի, առարկայական ծրագրի և դասագրքի վերլուծություն,
- հաճախում տվյալ առարկայի դասերի (նախնական, միջին, բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում), դասալսումներ, դասալսումների օրագրի վարում, պարապմունքների վերլուծություն, ուսուցչի և դասախոսի հետ նախապատրաստվելուց հետո դպրոցներում, ուսումնարաններում, քոլեջներում դասերի կամ բակալավրի կրթական ծրագրում ուսումնական պարապմունքների ինքնուրույն անցկացում (առնվազն 3 փորձնական և ստուգարքային դասեր կամ ուսումնական պարապմունք՝ (մասնագիտական հաստատություններում), դասախոսությունների անցկացում, կոնսպեկտների մշակում (առնվազն մեկ առարկայից),
- ձևավորում են տվյալ առարկայի դասավանդման մեթոդական փաթեթ, որը ներառում է.
 1. տվյալ առարկայի դասախոսությունները՝ օգտագործված գրականության ցանկով,

2. հատուկ թեստեր,
 3. տվյալ առարկային վերաբերող վերջին շրջանի տպագիր նյութեր (գրքեր, ամսագրեր, հոդվածներ և այլն),
- մասնակցում են ուսումնական հաստատության ամբիոնի աշխատանքներին.
1. ակտիվորեն մասնակցում են սեմինարներին, մեթոդավարումների աշխատանքներին, գիտական կոնֆերանսներին և այլն,
 2. մասնակցում են ուսումնական հաստատության ամբիոնի բոլոր միջոցառումներին՝ կապված ուսումնական, մեթոդական և դիդակտիկ նյութերի, գիտամեթոդական համալիրների և նյութերի ստեղծման հետ,
 3. պրակտիկայի ծրագրի շրջանակներում կատարում են առանձին հանձնարարություններ:

8. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Բարձրագույն ուսումնական հաստատությունում մագիստրոսի կրթական ծրագրով գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է երկրորդ կուրսում: Համաձայն ուսումնական պլանների՝ պրակտիկայի տևողությունը կազմում է 2 շաբաթ:

9. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Գիտամանկավարժական պրակտիկաների անցկացման ժամկետները որոշվում են յուրաքանչյուր ուսումնական պլանի ժամանակացույցին համապատասխան: Նպատակահարմարությունից ելնելով, ուսումնական հաստատությունը իրավասու է, պրակտիկայի անցկացման ժամկետները տեղաշարժելու ուսումնական տարվա ընթացքում՝ պահպանելով տևողությունը, բովանդակությունը:

10. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՄՆԱՀԱՏՈՒՄԸ

Մանկավարժական պրակտիկան ուսանողի կողմից համարվում է իրականացված պրակտիկայի ծրագրի բացառապես բոլոր պահանջների կատարման դեպքում:

Ուսանողի պրակտիկան գնահատվում է պրակտիկայի փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելուց հետո:

Պրակտիկայի արդյունքներով ուսանողը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

- ա) ուսանողի անհատական ուսումնական աշխատանքային պլան
- բ) տվյալ առարկայից մեթոդական փաթեթ
- գ) պրակտիկայի օրագիր:

Փաստաթղթերի ձևակերպման ընթացքում ուսանողը պետք է ուշադրություն դարձնի փաստաթղթերի ճիշտ ձևակերպմանը՝

1. ուսանողի անհատական պլանը պետք է ունենա նշում՝ պլանավորված աշխատանքի կատարման վերաբերյալ,
2. պրակտիկայի օրագիրը պետք է պարունակի կատարված աշխատանքի նկարագրությունը, պրակտիկայի անցկացման ինքնագնահատումը, հետևություններ և պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ առաջարկներ, ուսանողի ստորագրությունը, ներկայացման ժամանակը:

Բոլոր փաստաթղթերը պետք է ձևակերպվեն՝ համաձայն գործավարության կանոնների, և առանձին թղթապանակով հանձնվեն ամբիոններ:

Փաստաթղթերի հանձնման ժամկետը որոշում է դեկանատը՝ աշխատանքային պլանի համաձայն, որի մասին տեղեկացվում է նախապատրաստական կազմակերպական կոնֆերանսում:

Պրակտիկայի գնահատականը համարվում է ուսումնական առարկաների գնահատական և հաշվառվում է ուսանողների կիսամյակային ատեստավորման արդյունքներն ամփոփելիս:

Պրակտիկայի փաստաթղթերը պահվում են ամբիոններում:

Հավելված 1.

Մ Ա Գ Ի Ս Տ Ր Ո Ս Ի
ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

(ԱԱՀ)

(մասնագիտությունը)

N	Պրակտիկայի անցկացման ենթաբաժինը, աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետները	Նշում՝ կատարման մասին

Մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ _____
Ստորագրություն

Ուսանող՝ _____
Ստորագրություն

Հավելված 2.

ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ Պ Ր Ա Կ Տ Ի Կ Ա Յ Ի
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ամիս, ամսաթիվ	Կատարված աշխատանքի հակիրճ բովանդակությունը	Աշխատանքի արդյունքը	Պրակտիկայի անցկացման վայրի պատասխանատու ը
------------------	---	---------------------	--

			ստորագրությունը

Մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ _____

Ստորագրություն

Ուսանող

Ստորագրություն

Հավելված 3.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ

Մասնագիտություն՝ _____

ԱՄԲԻՈՆ՝ _____

Պրակտիկայի անցկացման հիմնարկության անվանումը

1. Կատարված աշխատանքը -----

2. Աշխատանքի համապատասխանությունը անհատական պլանին-----

3. Կատարված աշխատանքի ինքնագնահատման արդյունքը-----

(դժվարություններ, սպասումների արդյունքները, հաջողությունները)

4. Առաջարկություններ -----

ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- 1.
- 2.
- 3.
- 4.
- 5.

Ղեկավարի

_____ “ _____ ” _____

(ԱԱՀ) Ստորագրություն

Ուսանող _____ “ _____ ” _____

(ԱԱՀ) Ստորագրություն